

## ԼԻԳԻՆԳԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՇՈՒՌՋ

### Ա. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կարծիք կա, որ լիզինգը առնչվում է պատմությանն նորագույն շրջանում տնտեսավարող սուբյեկտների հարաբերություններին, սակայն այն իրականում հազարամյա պատմությունն ունեցող տնտեսական կատեգորիա է, որը շուկայական հարաբերությունների խորացմամբ նոր թափ ու լիցք է ստացել: Լիզինգի գաղափարը ծագել է անտիկ աշխարհում, բայց իրավական և տնտեսական արժևորումը արդյունք է հազարամյակների գաղափարական զարգացման: Անգլիացի պատմաբան Տ. Կլարկը Համուրապիի օրենքներում հայտնաբերել է լիզինգին առնչվող հոդվածներ<sup>1</sup> ընդունված մ.թ.ա. 1775-1750 թվականներին: Սեփականությանը վերաբերող օրենքների ծավալուն փաթեթը օրենսգրքի զգալի մասն էր կազմում: Այստեղ ամրագրված էին վարձակալության հնարավոր դեպքերը, վարձավճարի ձևերը, գույքի գրավադրումը և այլն:

Անտիկ աշխարհում արդեն գիտակցում էին, որ տնտեսական գործունեության արդյունքում շահ ստանալու համար պարտադիր չէ ակտիվների սեփականության իրավունքի ձեռքբերումը: Արիստոտելը իր «Մարտասանություն» տրակտատում<sup>2</sup> գտնում է, որ հարստությունը գոյանում է ոչ թե նրա հանդեպ ունեցած սեփականության իրավունքից, այլ արդյունավետ տնօրինումից: Արիստոտելը սեփականության և օգտագործման իրավունքի տարանջատման ենթատեքստում քննարկում է նաև կենցաղային մի շարք երևույթներ, իսկ սեփականության և օգտագործման իրավունքի տարանջատման երևույթի կիրառումը կարող է ներկայիս «know how» լիզինգի նախատիպ համարվել:

Մ. Գոշի «Ռատաստանագրքում» շարժական և անշարժ ստացվածքին զուգահեռ քննակվում է անձի վարձակալումը<sup>3</sup>, որն ընդհանուր եզրեր է պարունակում այժմ ԱՄՆ-ում հայտնի «employee» լիզինգի հետ:

*Միայն «know how» լիզինգի պարագայում լիզինգային պայմանագրում հնարավոր է սեփականության իրավունքի փոխանցում: Լիզինգատուի կողմից աշխատողներին աշխատավարձի հատկացումը ենթադրվում է միայն «employee» լիզինգի դեպքում:*

Աստվածաշնչում նույնպես առկա են վարձակալական գործարքների մասին բազում փաստեր՝ անշարժ գույքի և սարքավորումների, մասնավորապես խաղողի այգիների և գինեգործության համար անհրաժեշտ սարքավորումների վարձակալության<sup>4</sup> վերաբերյալ հիշատակություններ: Լեոան քարոզում, որտեղ խտացված են Հիսուս Քրիստոսի բարոյախոսության հիմնական սկզբունքները, և տրված է աղոթքի ճիշտ ձևը՝ «Հայր մերը», խոսվում է պարտքի ու պարտապանական հարաբերությունների մասին: Աստվածաշնչում այսօրինակ հարաբերությունների կարգավորմամբ ուղղորդվող «լիզինգ» ներդրումը կանխորոշված էր գործարքի տնտեսական հիմքում ընկած առաջարկի և պահանջմունքի անհամապատասխանությամբ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին միջազգային մասշտաբով առաջարկի և պահանջմունքի անհամապատասխանությամբ էին պայմանավորված լենդ-լիզի գործարքների այսօրինակ աննախադեպ ծավալները: 1941 թ. մարտին ԱՄՆ-ի կոնգրեսը,

<sup>1</sup> Տե՛ս E. B. Кабатова, Лизинг: понятия, правовое регулирование, международная унификация, Москва, 1991, с. 14:


<sup>2</sup> Տե՛ս Аристотель, Москва, 1984, էջ 645-681:

<sup>3</sup> Տե՛ս Միխայր Գոշ, Ռատաստանագիրք, Եր., 1975 թ., էջ 403:

<sup>4</sup> Նոր Կտակարան, Ավետարան՝ ըստ Մատթեոսի, գլ. Ի, Մարկոսի, գլ. Ժբ, Դովապի, գլ. Ի: Հին Կտակարան, Նաայի մարգարեություն, գլ. Ե, Երեմիայի մարգարեություն, գլ. ք:

հաշվի առնելով դաշնակից երկրներին 1914 թ. ֆինանսական արտաքին փոխափոխության տրամադրման փորձը, ընդունեց ապրանքային փոխափոխական համակարգի՝ լենդ-լիզի վերաբերյալ օրենք, որը ուղղակի ապահովում էր արտաքին շուկայում ամերիկյան արտադրանքի լայնածավալ սպառում: Լենդ-լիզի գործարքների ծավալը ԱՄՆ-ում 1941-45-ին կազմեցին 46 մլրդ դոլար (պատերազմի տարիներին ԱՄՆ-ի ռազմական ողջ ծախսերի 13%-ը և արտահանման 50%-ը): ԽՍՀՄ-ին ԱՄՆ-ի տրամադրած ապրանքային փոխափոխությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմում էր 9.800 մլն դոլար: Լենդ-լիզով Բրիտանական կայսրությանը մատակարարումները կազմեցին 30269 մլն դոլար, Ֆրանսիային՝ 1406, Չինաստանին՝ 631, լատինամերիկյան երկրներին՝ 421, այլ երկրներին՝ 424 մլն դոլար<sup>5</sup>: 1941 թ. մարտի 11-ից 1945 թ.-ի օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ում լենդ-լիզի գործարքները կազմեցին 46 մլրդ դոլար:

**1941-45 թթ. ԱՄՆ-ի արտահանման ծավալը (մլրդ \$)**



1. ԱՄՆ-ի արտահանման ծավալը (92)
2. Լենդ-լիզի չափը արտահանման ծավալում (%)

**1941-45 թթ. ԱՄՆ-ի ռազմական ծախսերը (մլրդ \$)**



1. ԱՄՆ-ի ռազմական ծախսերը (353,8)
2. Լենդ-լիզի ծավալը ԱՄՆ-ի ռազմական գործառնություններում (%)

1988 թվականից լիզինգի միջազգային հարաբերությունները կարգավորվում են Օտտավայում ընդունված Միջազգային ֆինանսական լիզինգի վերաբերյալ կոնվենցիայով: Հայաստանը, չունենալով արտադրական հզոր պոտենցիալ, լիզինգային հարաբերություններում հանդես է գալու որպես ներմուծող: Հաշվի առնելով Հայաստանի՝ միջազգային լիզինգի ուղղությամբ փորձի պակասը և լիզինգային հարաբերությունները կարգավորող օրենսդրական բացը՝ անչափ կարևոր է Հայաստանի ինտեգրվելը միջազգային ֆինանսական լիզինգի գործընթացներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշվում է, որ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատունն պայմանավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Կոնվենցիային անդամակցած երկրներում խորթ չէ արդեն հայտնի վարձակալության և դրան զուգահեռ լիզինգ երևույթի կիրառման փորձը<sup>6</sup>: Հաշվի առնելով կատեգորիայի տերմինային նորաստեղծությունը՝ անցումային երկրներում ևս արդարացի է լիզինգի զուգահեռ կիրառությունը (Ռուսաստան, Բելոռուսիա): Ֆրանսիայի<sup>7</sup>, Բելգիայի<sup>8</sup> օրենսդրությամբ ևս առկա էր ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու վերապահում, որը մեծապես ուներ լիզինգով հանձնվող գույքի հսկողության իրականացման ուղղվածություն, բայց մեկ տարի անց վերանայվեց: Հայաստանի պարագայում այդօրինակ վերապահումը լավագույնս չի

<sup>5</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան» հ. 4, էջ 537: «Большая советская энциклопедия», т. 24, էջ 490:

<sup>6</sup> Les Codes Belges Bruxelles, 1975.

<sup>7</sup> 1966 թ. ընդունվեց վարկա-վարձակալության (credit-bail) մասին օրենք:


<sup>8</sup> 1967 թ. ընդունված ֆինանսական վարձակալության վերաբերյալ որոշմամբ:

անդրադառնում է կոնոմիկայում լիզինգի տնտեսական ֆունկցիաների բազմազանության արտացոլմանը: Մասնավորապես լիզինգի սիներգիկ մուլտիպլիկատիվության օժտվածությունը կարող էր խորապես արտացոլվել սահմանումում: Օրենսդրության վերամշակմամբ են պայմանավորված լիզինգի այդօրինակ աճի տեմպերը Եվրոպայում:

**Սարքավորումների լիզինգի էվոլյուցիան Եվրոպայում\***

Տարի	Եվրոպա	
	Գումարը (000 էքլու)	% աճ
1978	6.900.000	-
1979	9.600.000	39,1%
1980	12.200.000	27,1%
1981	14.300.000	17,2%
1982	15.600.000	9,1%
1983	19.600.000	25,6%
1984	21.500.000	9,7%
1985	29.000.000	34,9%
1986	31.500.000	8,6%
1987	44.100.000	40,0%
1988	60.800.000	37,9%
1989	71.100.000	16,9%
1990	79.100.000	11,3%
1991	82.400.000	4,2%
1992	75.500.000	-8,4%
1993	67.300.000	-10,9%
1994	71.600.000	6,4%
1995	79.400.000	10,9%
1996	90.300.000	13,7%
1997	101.400.000	12,3%

**Լիզինգի տարեկան միջին աճը (1984 – 1997)**  
(Լիզյուրոպ, տարեկան հաշվետվություններ 1984-1997 թթ.)



15-20 տարվա կտրվածքով լիզինգի ծավալի աճի ամենաբարձր ցուցանիշ արձանագրվել է Պորտուգալիայում, Լյուքսեմբուրգում և Իռլանդիայում: Պորտուգալիան և Իռլանդիան կենտրոնական Եվրոպայի կյանքում տնտեսական զարգացածացությանը առաջնային դիրքերում չեն գտնվում, բայց հաշվի առնելով համաշխարհային տնտեսական գործընթացներին ինտեգրման լայն թափը և տնտեսական հարաբերությունների տվյալ փուլում գտնվող երկրների տոկոսային աճի պոտենցիալը՝ ամենևին էլ պատահական չեն էվոլյուցիայի գրաֆիկում նրանց այդչափ բարձր դիրքերը: Առաջին հայացքից այդ զարգացումը ինքնաբերական էր, և թվում էր արհեստածին: Ջարգացած երկրներում, ի համեմատություն զարգացողների, գերակշռող է ներդրումներում լիզինգի ընդհանուր հարաբերակցությունը: Ըստ էվոլյուցիայի վերլուծության՝ լիզինգային կայացած հարաբերությունները՝ ներդրման ճկունությամբ, ինչպես նաև գործիքի վերաբերյալ ինֆորմացիոն հազեցվածությամբ, գրավական են լիզինգի ճանապարհով ներդրումների

\* Լիզյուրոպ, տարեկան հաշվետվություններ (1978 – 1997 թթ.):

ներգրավման, ինչը պետք է հաշվի առնել Հայաստանի պարագայում լիզինգի ճանապարհով ներդրումների ներգրավման խնդրում: Էվոլյուցիայի վերոնշյալ ուղին են անցել նաև զարգացած երկրները, որտեղ ընդունված ռազմավարություն է լիզինգի ճանապարհով լրացուցիչ ներդրումների ներգրավումը:

Եթե 70-80 տարի առաջ չէին պատկերացնում կատեգորիայի էությունը և նշանակությունը տնտեսությունում, ապա այժմ զարգացած երկրներում լիզինգի ճանապարհով է կատարվում ներդրումների զգալի մասը, և աշխարհում ամենաբարձր ցուցանիշը ԱՄՆ-ում է:

**ԱՄՆ-ում լիզինգի չափաբաժինը սարքավորումների ներդրման ընդհանուր ծավալում (մլրդ դոլար )<sup>10</sup>**

	1980	1986	1987	1988	1989	1990	1991	1992	1993	1994
Լիզինգ	36.5	85	98	112.7	125.4	124.3	120.2	121.7	130.5	140.2
Ներդրումներ	208.9	296.2	311.2	348.4	365.7	388.3	375.5	376.2	443.9	466.1
Լիզինգի ծավալը ներդրումներում (%)	17.4	28.7	31.5	32.3	34.3	32	32	32.3	29.4	30.1

1980-ականների սկզբից նկատելի է ներդրումների և ներդրումներում լիզինգի ծավալի աճ, 1990-ական թվականներին կայունացման միտում է ցուցաբերում ներդրումների ծավալում սարքավորումների լիզինգի 30% սահմանաչափում:

Հայաստանի տնտեսությունում լիզինգառու ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենսդրորեն համահավասարեցումը, ներդրումային տիպի լիզինգային գործարքների օրենսդրորեն խրախուսումը կնպաստեն լիզինգի ճանապարհով ներդրումների ներգրավմանը և կիթանեն տնտեսության զարգացումը:

Չնայած լիզինգի արդիական մոտեցման՝ պատմության նորագույն շերտերի աղերսներին, այնուամենայնիվ գաղափարի էվոլյուցիան պատմական խորը զարգացումների արգասիք է: Սկսած 1988 թվականից՝ լիզինգի միջազգային հարաբերությունները կարգավորվում են Օտտավայում ընդունված Միջազգային ֆինանսական լիզինգի վերաբերյալ կոնվենցիայով: Հայաստանի տնտեսությանը բնորոշ տեխնոլոգիական խրվածքի և արտադրական հզոր պոտենցիալի բացակայության պայմաններում լիզինգային հարաբերություններում, որպես միջազգային սուբյեկտ, հանդես ենք գալու լիզինգառուի դիրքերից: Այս առումով կարևորում են Միջազգային ֆինանսական լիզինգի վերաբերյալ կոնվենցիային Հայաստանի անդամակցումը: Լիզինգը տնտեսությունում ներդնելիս հաշվի պետք է առնել գործարքի տնտեսական հիմքում ամփոփված առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության հավասարապես ծառայեցումը ի շահ իրավաբանական և ֆիզիկական անձանց: Ներդրումային տիպի լիզինգային գործարքների դեպքում անհրաժեշտ է տարբերակված մոտեցում՝ հարկային արտոնյալ համակարգի սահմանմամբ:

**А. Р. МАРТИРОСЯН - К вопросу о понимании лизинга.** - Несмотря на новейшие уровни подхода к лизингу, эволюция самой идеи уходит в глубь истории. Начиная с 1988 года, международные взаимоотношения лизинга регулируются принятой в Оттаве конвенцией о Международном Финансовом Лизинге. В лизинговых взаимоотношениях Армении как субъекта на международном уровне, в условиях отсутствия технологического разрыва и могучего экономического потенциала, она будет представлена в качестве лизингополучателя. Важно само участие Армении в конвенции о Международном Финансовом Лизинге. При вовлечении лизинга в экономику необходимо иметь в виду заложенное в основе экономической сделки несоответствие предложения и спроса и равно соблюдать интересы юридических и физических лиц. В случае инвестиционных лизинговых сделок необходим дифференциальный подход с установлением привилегированной налоговой системы.

<sup>10</sup> Str'u «Euromoney Books», «Leasing Finance» London: 1990, էջ 5: